**ՆԱԽԱԳԻԾ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**2022 թվականի _________________-ի**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**N___-Ն**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Հիմք ընդունելով «Կրթության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի ուսուցման համակարգում ուսման վճարի չափը որոշում է տվյալ ուսումնական հաստատությունը՝ համաձայնեցնելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ:

3. Թույլատրել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ պահուստային տեղերի բաշխումը և ըստ հաստատությունների թափուր մնացած տեղերի վերաբաշխումն իրականացնել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին տրամադրված տեղերի շրջանակում:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հաստատում եմ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022 թվականի_______________
ք. Ստեփանակերտ

*Հավելված*
*Արցախի Հանրապետության*
*կառավարության*
*______ ______________ 2022 թվականի*
*N ____-Ն որոշման*

**Ց Ա Ն Կ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ**

### ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԻ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԻ

### 1. «ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| **Դասիչը** | **Մասնագիտությունը, կրթական ծրագիրը** | **Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը** | **Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը** |
|---|---|---|---|
| | | **Հիմնական կրթության հիմքով** | |
| ***0411*** | ***Հաշվապահություն*** | | |
| **0411.01.5** | Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի) | 10 | 10 |
| ***0612*** | ***Տվյալների բազաների և տեղեկատվական ցանցերի ստեղծում և կառավարում*** | | |
| **0612.01.5** | Տվյալների բազաների մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր | 10 | 10 |
| ***0716*** | ***Ավտոմեքենաներ, նավեր և ինքնաթիռներ*** | | |
| **0716.17.5** | Գյուղատնտեսության մեքենայացում | 15 | 5 |
| ***0731*** | ***Ճարտարապետություն և քաղաքաշինություն*** | | |
| **0731.01.5** | Քաղաքաշինական կադաստր | 10 | 10 |
| ***0738*** | ***Ճարտարապետությանը և շինարարությանն առնչվող այլ միջոլորտային մասնագիտություններ և որակավորումներ*** | | |
| **0738.03.5** | Ջրամատակարարում և ջրահեռացում | 10 | 10 |
| ***0811*** | ***Ագրոնոմիա և անասնաբուծություն*** | | |
| **0811.01.5** | Գյուղատնտեսագիտություն | 10 | 10 |
| **0811.07.5** | Անասնաբուժություն | 15 | 5 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***80*** | ***60*** |

### 2. *ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)*

| **Դասիչը** | **Մասնագիտությունը, կրթական ծրագիրը** | **Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը** | | **Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը** | |
|---|---|---|---|---|---|
| | | **Հիմնական կրթության հիմքով** | **Միջնակարգ կրթության հիմքով** | **Հիմնական կրթության հիմքով** | **Միջնակարգ կրթության հիմքով** |
| ***0912*** | ***Բժշկություն*** | | | | |
| 0912.01.5 | Բուժական գործ | 8 | - | 22 | - |
| 0912.02.5 | Մանկաբարձական գործ | 8 | - | 22 | - |
| ***0913*** | ***Քույրական գործ*** | | | | |
| 0913.02.5 | Քույրական գործ | 8 | 6 | 22 | 24 |
| ***0916*** | ***Դեղագործություն*** | | | | |
| 0916.01.5 | Դեղագործություն | - | 6 | - | 24 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***24*** | ***12*** | ***66*** | ***48*** |

### *3. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)*

| Դասիչը | Մասնագիտությունը, կրթական ծրագիրը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| | | Հիմնական և միջնակարգ կրթության հիմքով | |
| ***0215*** | ***Երաժշտություն և կատարողական արվեստ*** | | |
| 0215.01.5 | Երգեցողություն | 3 | 6 |
| 0215.02.5 | Երգչախմբավարություն | 2 | 1 |
| 0215.03.5 | Երաժշտության տեսություն | 1 | 1 |
| 0215.04.5 | Էստրադային արվեստ | 1 | 2 |
| 0215.06.5 | Գործիքային կատարողական արվեստ (ըստ գործիքների տեսակների) | 18 | 10 |
| | **Պահուստային տեղեր** | **5** | **-** |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***30*** | ***20*** |

### *4. ՇՈՒՇԻԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ*

### *4.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ*

| Դասիչը | Մասնագիտությունը, կրթական ծրագիրը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը |
|---|---|---|---|
| | | Հիմնական կրթության հիմքով | |
| ***0212*** | ***Նորաձևություն, ներքին հարդարման և արտադրական դիզայն*** | | |
| 0212.01.5 | Դիզայն | 12 | 3 |
| 0212.02.5 | Հագուստի մոդելավորում և նախագծում | 13 | 2 |
| ***0214*** | ***Կիրառական արվեստ*** | | |
| 0214.01.5 | Զարդակիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ | 10 | 5 |
| | **Պահուստային տեղեր** | **5** | **-** |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***40*** | ***10*** |

### *4.2. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ*

| Դասիչը | Մասնագիտությունը, կրթական ծրագիրը | Քոլեջի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) տեղերը (միջնակարգ կրթության հիմքով) |
|---|---|---|
| ***0322*** | ***Գրադարանավարություն, տեղեկատվություն և արխիվավարություն*** | |

| | | |
|---|---|---|
| 0322.02.5 | Գրադարանային գործ | 15 |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***15*** |

### *5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋ*
### *(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)*

| **Դասիչը** | **Մասնագիտությունը, կրթական ծրագիրը** | **Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը** | |
|---|---|---|---|
| | | **Հիմնական կրթության հիմքով** | **Միջնակարգ կրթության հիմքով** |
| ***0114*** | ***Առարկայական ուղղվածությամբ դասավանդում*** | | |
| 0114.04.5 | Պարի ուսուցում | - | 20 |
| ***0215*** | ***Երաժշտություն և կատարողական արվեստ*** | | |
| 0215.05.5 | Պարարվեստ | 10 | - |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***10*** | ***20*** |

### *6. «ԱՆՏՈՆԻԱ ԱՐՍԼԱՆ ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ*
### *(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)*

| **Դասիչը** | **Մասնագիտությունը, կրթական ծրագիրը** | **Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը** | |
|---|---|---|---|
| | | **Հիմնական կրթության հիմքով** | **Միջնակարգ կրթության հիմքով** |
| ***0214*** | ***Կիրառական արվեստ*** | | |
| 0214.03.4 | Փայտագործություն | 15 | 10 |
| ***0415*** | ***Գործավարություն*** | | |
| 0415.01.4 | Գործավարություն | - | 10 |
| ***0714*** | ***Էլեկտրոնիկա և ավտոմատացում*** | | |
| 0714.11.4 | Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում | 15 | - |
| ***0723*** | ***Տեքստիլ արդյունաբերություն*** | | |
| 0723.03.4 | Կարի արտադրության տեխնոլոգիա | 15 | 10 |
| ***1012*** | ***Վարսահարդարում և խնամք*** | | |
| 1012.01.4 | Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում | 15 | - |
| ***1013*** | ***Հյուրանոցային և ռեստորանային սպասարկում*** | | |
| 1013.03.4 | Խոհարարական գործ | 15 | - |
| ***1041*** | ***Տրանսպորտային ծառայություններ*** | | |
| 1041.02.4 | Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) | 15 | - |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***90*** | ***30*** |

### 7. ՄԱՐՏՈՒՆՈՒ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտությունը, կրթական ծրագիրը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը | |
|---|---|---|---|
| | | Հիմնական կրթության հիմքով | Միջնակարգ կրթության հիմքով |
| ***0611*** | ***Ինֆորմատիկա*** | | |
| 0611.01.4 | Համակարգիչների շահագործում | 15 | - |
| ***0714*** | ***Էլեկտրոնիկա և ավտոմատացում*** | | |
| 0714.02.4 | Մեքենաների և մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում | 15 | - |
| ***0715*** | ***Մետալուրգիա և մեքենաշինություն*** | | |
| 0715.03.4 | Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա | 15 | - |
| ***0723*** | ***Տեքստիլ արդյունաբերություն*** | | |
| 0723.03.4 | Կարի արտադրության տեխնոլոգիա | 15 | 15 |
| ***1012*** | ***Վարսահարդարում և խնամք*** | | |
| 1012.01.4 | Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում | 15 | - |
| ***1041*** | ***Տրանսպորտային ծառայություններ*** | | |
| 1041.02.4 | Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում ըստ տեսակների | 15 | - |
| 1041.03.4 | Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում | 15 | - |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***105*** | ***15*** |

### 8. «ԵԶՆԻԿ ՄՈՁՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտությունը, կրթական ծրագիրը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը (հիմնական կրթության հիմքով) |
|---|---|---|
| ***0713*** | ***Էներգետիկա և էլեկտրատեխնիկա*** | |
| 0713.02.4 | Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում | 15 |
| 0713.06.4 | Ջերմաէներգետիկ սարքվորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում | 15 |
| ***0715*** | ***Մետալուրգիա և մեքենաշինություն*** | |
| 0715.03.4 | Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա | 15 |
| ***0732*** | ***Շենքերի և քաղաքային ճարտարագիտություն*** | |
| 0732.01.4 | Վերանորոգման աշխատանքների իրականացում | 15 |
| 0732.04.4 | Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում | 15 |
| 0732.06.4 | Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ | 15 |
| ***1013*** | ***Հյուրանոցային և ռեստորանային սպասարկում*** | |
| 1013.03.4 | Խոհարարական գործ | 15 |
| | **Պահուստային տեղեիր** | **5** |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ*** | ***110*** |

*ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*
*ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ*
*ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ*
*ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ* Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

# Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

## «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

**1. Անիրաժեշտությունը-** ԱՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Կրթության մասին» օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներից:

**2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները-** Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի հաստատվում են միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների ըստ մասնագիտությունների անվճար և վճարովի ուսուցման տեղերը: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սահմանված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը նախատեսվում են մրցութային քննական առարկաներից առավել բարձր միավորներ ունեցող դիմորդներին փոխատեղման կարգով ընդգրկելու համար, իսկ պահուստային անվճար տեղերում ընդգրկվում են ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով սոցիալական խմբերի դիմորդները:

Միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատություններում ընդունելության քննություններ չեն սահմանվում, բացառությամբ արվեստի ոլորտի մասնագիտությունների, որոնց համար սահմանվում են մասնագիտական քննություններ, և ընդունելությունն իրականացվում է դիմորդի կրթության փաստաթղթում ունեցած տվյալ մասնագիտության համար սահմանված մրցութային առարկաների տարեկան կամ քննական գնահատականների հիման վրա:

**3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը-** Միջին մասնագիտական և արհեստագործական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում՝ հիմք ընդունելով հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հետագա խնդիրները:

4. **Կարգավորման նպատակը և բնույթը** -Միջին մասնագիտական և արհեստագործական կրթական ծրագրերով ընդունելության մասնագիտությունների անվճար և վճարովի ուսուցման տեղերի հստակեցում և կանոնակարգում:

5. **Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտներն ու անձինք-** ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մասնագիտական կրթության և գիտության բաժին, միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների տնօրեններ:

6. **Ակնկալվող արդյունքը-** Նախագծի ընդունումը կաջակցի հանրապետության տնտեսության զարգացման կարիքներին համապատասխան և պետության համար առաջնային ու կարևորություն ներկայացնող բնագավառներում արհեստավորների և կրտսեր մասնագետների պատրաստմանը:

**Ա. Հակոբյան**

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ներկայացվող «Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ներկայացվող «Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը տեղեկատվական միջոցներով ներկայացվել է հանրային քննարկման:

**Ա. Հակոբյան**

**Փ Ո Ր Ձ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն  Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ**

ԶԵՂՉԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ (ՎՃԱՐՈՎԻ) ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՏԵՂԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

**Լիցենզավորման և իրավաբանական**

**բաժնի վարիչ Ա. Ապրեսյան**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**ՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ**

**Որոշման նախագծի անվանումը** «Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքներով (վճարովի) առկա ուսուցման տեղերը և հեռակա ուսուցման վճարովի տեղերը հաստատելու մասին»

**Նախագիծը ներկայացնողը՝** Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Արցախի Հանրապետության կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն

**Նախագիծը պատրաստողը՝** ԱՀ ԿԳՄՍՆ աշխատակազմի ԿԳՎ մասնագիտական կրթության և գիտության բաժին: